


Ն. Պ. ՆԵՐՈՒՄՆԱՅԻՆ

ԻՆՉՈՒՄ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ
— ՑԵՎ ԻՆՉԻ ՑԵ ԶԳՏՈՒՄ —
ԳՅՈՒՂԱՆՏԱՌ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ



ՊՐԻՎԱԴԻ ՀՐԱՏԱՐՈՒԿՉՈՒԹՅՈՒՆ. — ՑԵՐԵՎ, 1929




Ե. Պ. ՆԵՐԱՄՆԵՐ

338.1K(09)

A 44x2

ԻՆՉՈՒՍ Ե ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ
===== ՅԵՎ ԻՆՉԻ ՅԵ ԶԳՏՈՒՄ =====
ԳՅՈՒՂԱՆՏԱՌ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

~~ԽԵՍՏԱՀԱՅ~~



Պետական հրատարակչություն. — Տերեվան 1929

Հր. № 927 Գրառելովար № 1697 (ր): Տիրամ 3000
Պետհրատի առաջին աղաբան Վազարշապատում
Պատվեր № 37

1. ՄԻՈՒԹՅՈՒՆԸ - ՈՒԺ Ե

Իլլա Մուրոմեցի* մասին մի հեքլաթ կա.
իբր թե նա 30 տարի նստած է յեղել և 30 տարի
եղակես նստած մնացել ե, առանց իմանալու, թե
ինքն ինչ ուժի տեր է։ Մի որ նրա մոտ մի ոտա-
րական ե զալիս և ասում ե. «Այ հսկա, վեր
կաց»։ Յեվ հսկան վոտքի յե յելնում և իր մեջ
զգում ե այնպիսի մի ուժ, վոր նրան թվում ե,
վոր յեթե յերկրից մինչև յերկինք մի սյուն լիներ
տնկած՝ ինքը կբռներ այդ սյունից և ամբողջ աշ-
խարհը շուռ կտար։

Բայց, իհարկե, սա հեքլաթ ե, սարքած բան
ե. բանը հրաշքների մեջ չե, այլ բանը նրանումն
ե, վոր բանվորությունն ել հենց այդ հեքլաթի
հսկալի նման շատ անգամ չի իմանում, վոր ինքն
այնպիսի մի ուժ ունի, վոր կարող ե աշխարհը
շուռ տալ։

Իհարկե, մի բանվորը մենակ այդպիսի ուժ չի
կարող ունենալ. այդ ուժը կոլեկտիվի, միության

* Իլլա Մուրոմեցը սուսական ժողովրդական ավանդական
հերոսներից մեկն է.

մեջ եւ Շատ մեծ եւ այդ ուժը Բերենք մի
որինակ.—յերբ մեծ մասով անգրագետ, քաղցած,
իշխողների, կալվածատերերի կողմից ճնշված
բանվորներն ու գյուղացիները միացան, նրանք
վոչ միայն կարողացան հաղթել ցարին, կալ-
վածատերերին, կապիտալիստներին և նրանց
գեներալներին, այս ահա քանի տարի է ար-
դեն, նրանք իրենց համար շատ հաջող կերպով
նոր կյանք են կառուցում։

Մեզնից ամեն մեկը գիտե, վոր խմբովին,
միացյալ ուժերով աշխատելն ավելի հեշտ ե, քան
մենակ գրա համար ել, յերբ հարկավոր ե մի գե-
րան տեղափոխել, մենք հավաքվում ենք և հեշտու-
թյամբ տեղափոխում, այսինչ մենակ մարդը
տեղից շարժել ել չի կարող։ Ամեն մի գործ ել
այդպես եւ Յեթե մենք միացյալ ուժերով աշխա-
տելու լինենք, ինչ գործ ուղում ե լինի—հեշտու-
թյամբ կկատարենք։

Քաղաքի բանվորները թե մեզնում և թե
ուրիշ յերկրներում վաղուց արդեն հասկացել են,
վոր վոչ միայն աշխատելը, այս իրենց պաշտ-
պանելը, իրենց գրությունը բարելավելը և շահա-
գործողների գեմ կռվելը միացյալ ուժերով, խմբո-
վին (արտելով) ավելի հեշտ ե, քան ջոկ-ջոկ, մեկ-
մեկ։ Դրա համար ել նրանք վաղուց ե, միանում
են, բանվորական միություններ են կաղմակեր-

պում և, ինչպես ասում են, իրար թե ու թիկունք
դառած՝ մեկը մյուսին ե պաշտպանում։ Այդպիսի
միությունը հնարավորություն ե տալիս նրանց
հաղթություններ տանելու գործարանատերերի և
կալվածատերերի գեմ այն յերկրներում, վորտեղ
բանվոր դասակարգը զեւսա վերջնական հաղթա-
նակ չի տարել։ Ես բանը շատ լավ գիտեն
մետաղագործները, հանքագործները, մանածա-
գործները և ամբողջ գործարանային բանվորու-
թյունը։ Այդ բանը հասկացել ե նաև գյուղա-
տնտեսական բանվորների առաջավոր մասը։

Բայց և այնպիս շատ գեպքերում գյուղա-
տնտեսական բանվորներից շատերը, առանձա-
պիս արտասահմանում, կապիտալիստական յերկր-
ներում, մինչև որս ել չեն հասկացել միության
նշանակությունը։ Բայց դրա մեղքը նրանցը չի,
նրանց հետամնացությունն ե պատճառ։

Ճարի ժամանակ, գյուղատնտեսական բան-
վորների միանալուն և առաջադիմելուն խանգա-
րում ելին կալվածատերերը, աղալարները, զոր-
բեքը, տերտերները, ստրաժնիկները և առհասա-
րակ ամբողջ իշխանությունը և ինքը թագավորը։
Են ժամանակ վոչ միայն չեր կարելի հավաքվել,
ժողովներ անել, այլև չեր կա ելի վորեե մեկին
գանգատվել, բողոքել եղ ծանր դրության մասին։

Քաղաքում ավելի հեշտ եր, քանի վոր գործա-

բաններում բանվորներն աշխատում են միասին
և միշտ ել հնարավորություն ունեն խոսելու և
խորհրդակցելու միմյանց հետ և վորոշելու, թե
ինչ ձեռվ պետք ե կռվել իրենց դրությունը
բարելավելու համար:

Ահա, վրա հասավ հեղափոխությունը, թագա-
վորն ել թռավ թափթիցը, կալվածատերն ել,
և նրանց հետ ել ուրիագնիւը, ստրաժնիկը և մյուս-
ները կործանվեցին։ Աշխատավորները հնարա-
վորություն ստացան ազատ խոսել և միասին
գործել։ Յեվ պարզվեց, վոր պատերազմն ու
հեղափոխությունը բանվորներին շատ բան են
սովորեցրել։ գյուղի տվելի գիտակից բանվորներն
սկսեցին մտածել, թե ինչպես բարելավեն իրենց
դրությունը։

1917 թվին Լենինը «Պրավդա» թերթում
գրել եր. «Քաղաքի բանվորներն ավելի փորձված
և պատրաստված են և ավելի միջոցներ և ուժ
ունեն. այդ ուժերի մի մասը պետք ե գյուղի
բանվորներին տալ նրանց ոգնելու համար։

Լենինի պատվերն այժմ կատարվում է. քաղա-
քի ավելի կազմակերպված և փորձ ունեցող
բանվորներն ոգնեցին գյուղի բանվորներին, և
վերջիվերջո քաղաքի բանվորական պրոֆմիու-
թյունների և գյուղական առաջավոր բանվորների
ջանքերով հիմք դրվեց Գյուղ-Անտառ Բանվորների

Միության, վորը ներկայումս միլիոնավոր կազմակերպված մի բանակ և ն բկացացնում:

Յեվ ահա ևս գիրքը զրված և նրա համար, վոր ամեն մեկն խմանա, թե ինչպես են կազմակերպվուն գլուղատնտեսական և անտառալին բանվորները, և թե ինչ ոգուտ կա դրանից:

2. Ի՞ՆՉ Ե ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆԸ

Մեկը վարձով աշխատում և գլուղացու անտեսության մեջ, մյուսը՝ խորհրդալին տնտեսության մեջ, յերրորդը՝ անտառում, մյուսները՝ ծխախոտի պլանտացիայում են աշխատում, բամբակի դաշտում կամ թե վորնե խորհրդալին տնտեսության մեջ:

ԽՍՀՄ-ում* մեր գլուղատնտեսական և անտառալին բանվորների թիվը $3^{1/2}$ միլիոնից ավելի է: Մենք մեկս մյուսին չենք ճանաչում, և միմյանց ազգական ու խնամին չենք, բայց, չնայած դրան, մենք բոլորս միմյանց մոտիկ ենք: Ինչու, շատ պարզ ե, չե վոր մեզնից ամեն մեկն աշխատում ե վոչ թե իրեն սեփական տնտեսության մեջ, այլ ուրիշի, մեզնից ամեն մեկն իր աշխատանքի համար վորոշ վարձատրություն, աշխատավարձ ե ստանում և դրանով ել ապրում ե,

* ԽՍՀՄ ասելով հասկացվում ե Խորհրդային Սոցիալիստական Հանրապետությունների Միությունը:

կերակրվում եւ և պահում եւ իր ընտանիքը։ Մեզ-
նից վոչ մեկին ալդ աշխատավարձը չի բավա-
րարում և մանք բոլորս ել վատ ենք ապրում,
ինչպես ասում են, հազիվ ծալրը ծալրին հասցնե-
լով, չարչարանքով։ Ամեն մի բոպե մեզնից ամեն
մեկին կարող են աշխատանքից զրկել, արձակել,
և ալդ դեպքում մենք կարող ենք մի կտոր հացից
ել զրկվել։

Քանի վոր բոլորիս դրությունն ելնույնն ե,
յես, դու և բոլորն ել, վորոնք վարձու աշխատանք
են կատարում՝ մեր դրությամբ մոտիկ մարդիկ
ենք. մեր բոլորիս կարիքն ել մտածմունքն ել
նույնն ե, և հաճախ միենույն դժվարությունների
առաջ ենք կանգնած լինում բոլորս ել իբրև
բանվոր մարդ յես ել, դու յել և մենք բոլորս ել
ցանկանում ենք և ձգտում ենք լավ ապրել. յես
ել չեմ ուզում պարագ մնալ, վորպեսզի քաղցած
չմնամ, դու յել, յերբորդն ել, չորրորդն ել և
բոլոր մեզ նմաններն ել։ Դրա համար անհրա-
ժեշտ ե, վոր մեզնից ամեն մեկը զիտենա, թե
ինչպես պիտի իր դրությունը բարելավի։

Իհարկե, ամեն մեկիս համար պարզ ե, վոր
այն բանվորը, վորն աշխատում ե խորհրդալին,
տնտեսության մեջ, ալդ նպատակին պիտի ձգտի
համանել ուրիշ ձեռվ, քան այն բատրակը, վորն
աշխատում ե մասնավոր դյուղացու—վարձողի
տնտեսության մեջ։

Խորհրդավին տնտեսությունը պետական տընտեսություն է, նրա տված արդյունքը վորքանշատ լինի, տնտեսությունն այնքան կամրանա, իսկ յերբ խորհրդավին տնտեսությունն ուժեղ է, հնարավոր կլինի բանվորների և բանվորուհիների դրությունը լավացնել. դրա համար ել բանվորների վերաբերմունքը դեպի խորհրդավին անտեսությունը (սովլսողը) այլ է, քան դեպի կուլակի տնտեսությունը, վորն աշխատում է բանվորի աշխատանքի ամբողջ արդյունքն իրեն վերցնել: Ահա այդ բանը լավ պիտի ըմբռնի բատրակը, վորպեսզի համապատասխան ձեռվ կարողանա իր իրավունքները պաշտպանել կուլակի տնտեսության մեջ աշխատելիս:

Պետք է ասել, վոր մենակ մի բանվորը, առանձին վերցրած, մանավանդ, յեթե նա անդրագիտ է, միշտ չի կարող ամեն բան լավ հասկանալ և ըմբռնել, առավել ևս նա չի կարող մեն-մենակ իր իրավունքները պաշտպանել: Դրա համար ել, վորպեսզի կարողանան միմյանց պաշտպանել, բանվորներին անհրաժեշտ է միատեղ հավաքվել, միմյանց հետ խորհրդակցել և ացն:

Յեթե յերկու, յերեք, չորս կամ ավելի հոգի մի տեղ հավաքենք, կարող ենք ամեն բանի մասին խոսել և պարզել, թե ինչ պիտի անենք, վոր մեր ապրուստը լավացնենք և միմյանց ոգնենք:

Մի անդամ հավաքվելով, ինարկե, բայ չի գուրս
դա:

Այն ժամանակ յերբ բանվորները դիտակցում
են, վոր անհրաժեշտ և իրենց դրությունը բարե-
լավելու համար միասին խորհրդակցել՝ նրանք
միանում են միմյանց և պայմանավորվում են, թե
ինչ նպատակի համար են կուվելու և ինչ ձեռվ:
Միության կանոնադրությունը նույնպես մշակ-
վում է, միասին քննության առնելով հարցերը:

Ուրեմն, յեթե վարձու բանվորները և բան-
վորուհիները միանան միմյանց հետ իրենց դրու-
թյունը բարելավելու և իրենց վորոշումներն իրա-
կանացնելու համար, այն ժամանակ նրանց մա-
սին կասեն, վոր նրանք միացել են, կամ կասեն,
վոր նրանք պրոֆմիություն են կազմակերպել:

Այդպիսի միության կանոնադրության մեջ
դրված ե լինում, թե ինչ պիտի անի միությունը
և միության անդամներից ամեն մեկը, վորպեսզի
միության անդամների դրությունը լավացնեն:

Ուրեմն, միություն ստեղծելու համար անհրա-
ժեշտ և հավաքվել և պայմանավորվել, թե ինչ
պիտի արվի, ինչպես պիտի արվի և թե ով ինչ
աշխատանք և տանելու: Յեվ յերբ վոր այդ բո-
լորը վորոշվեց, պետք ե առանց տատանվելու և
վախենալու իրազործել հանած վորոշումները, թե-
կուղ և այդ դուր չգա վարձատերերին:

Այստեղ մենք խոսում ենք բանվորների մասին, այսինքն՝ միայն նրանց մասին, վորոնք աշխատում են վարձով, վորոնք կամ ամենեին սեփական տնտեսություն չունեն, կամ յեթե ունեն ել, դրանով ապրել չի լինի։ Մենք խոսում ենք նրանց մասին, վորոնք վարձվում են, վորոնք իրենց աշխատանքն են ծախում։

Այն մարդիկ, վորոնք վորեե սեփականություն չունեն և վաճու աշխատանք են տանում ու ապրում են իրենց աշխատանքի վարձով՝ կոչվում են բանվորներ կամ այլ կերպ՝ պրոլետարներ։ Այն դեպքում, յերբ նրանք ունեն ապրուստի ուրիշ աղբյուր, բայց վարձու աշխատանքն ապրուստի գլխավոր աղբյուրներից մեկն ե, նրանք կոչվում են կիսապրոլետարներ։ Բանվոր մարդկանց միությունը, վոր կազմակերպվում ենրանց շահերը պաշտպանելու համար՝ կոչվում ե բանվորական կազմակերպություն։

Պրոֆեսիոնալ կազմակերպությունը բանվորական կազմակերպությունների մի տեսակն է։ Կոմունիստական կուսակցությունն ել բանվորական կազմակերպություն ե, բայց նա ավելի լայն կորիզ ե տանում, քան պրոֆեսիոնալ միությունը։ Կուսակցությունն ամբողջ բանվոր դասակարգի կողմից կոմունիզմի համար մղվող կովկա դարձավ ե,

Այս գրքի մեջ պիտի խոսենք միայն պըռֆե-
սիոնալ միությունների մասին:

Յ. ԻՆՉՈՒԻ ԲԱՆՎՈՐՍԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՊՐՈՖԵՍԻՈՆԱԼ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՆ ԿՈԶՎՈՒՄ

Քաղաքի և գործարանալին բանվորները շատ
վաղուցվանից են, վոր սկսել են միություններ
կազմակերպել. Մեզ մոտ ԽՍՀՄ-ում ոճնք այդ-
պիսի 23 միություն ունենք:

Ինչու բոլոր բանվորները մի միության մեջ
չեն մտնում, այլ առանձին միություններ են
կտրմում:

Ահա,թե ինչու: Ասենք, յես աշխատում եմ
գյուղական կամ անտառալին տնտեսության մեջ,
մյուսը՝ յերկաթուղու վրա, յերրորդը՝ գործարա-
նում և ալին: Յեթե յես խորհրդալին տնտեսու-
թյան մեջ աշխատել եմ միքանի տարի, ապա յես
կկարողանամ աշխատել և գյուղացու տնտեսու-
թյան մեջ, բանի վոր գյուղացու տնտեսության
մեջ յես նույն աշխատանքներն եմ կատակու, ինչ
վոր և խորհրդալին տնտեսության մեջ. այսինքն,
ելի պետք են վարել, ցանել, անասուններին նա-
լել և ալին. բայց գործարանալին բանվորի աշ-
խատանքը լիս առանց սովորելու չեմ կարող կա-
տարել:

Յեթե յես իմ ամբողջ կյանքում մինչեւ

գործով եմ պարապում, յես ընտելանում, ծանոթանում եմ իմ գործին հիմնավորապես, կամ ինչպես գիտական լեզվով ասում են՝ մասնագիտանում եմ և իմ գործին լավ տեղյակ եմ դառնում։ Յերբ վոր մի վորոշ գործ լավ գիտես, ասում են դու պրոֆեսիա ունես։ Այդպես ասում են՝ այսինչը կոշկակար ե. այդ նշանակում ե, վոր նա կոշկեկ կարել գիտե, կամ ասում են՝ այսինչը պրոֆեսիայով դարբին ե – այդ նշանակում ե, վոր նա լավ յերկաթե իրեր, գործիքներ գիտե շինել։ Լինում ե, վոր մի մարդ միքանի գործ գիտե անել, այն ժամանակ ասում են, վոր նա միքանի պրոֆեսիա ունի։ Բայց այդպիսիները քիչ են լինում։ Մեծ մասամբ մարդիկ մեկ կամ յերկու պրոֆեսիա յեն ունենում։ Այդպես, մեկը ծանոթ ե լինում միայն գյուղատնտեսական աշխատանքներին, մյուսը գիտե միայն կոշկեկ կարել, յերորդը՝ միայն դարբնություն և այլն։

Բանվորները, լինեն նրանք կոշկակար, դարբին կամ գյուղատնտեսական բանվորներ, բոլորն ել աշխատում են վարձով և նրանց շահերը մեկ են, պրոլետարական շահեր են։ Բայց այդ ընդհանուր շահերի հետ միասին կան հարցեր, վորոնք հատուկ են առանձին պրոֆեսիաներին։ Իհարկե, այս պրոֆեսիոնալ շահերը չեն հակասում ինդանուր պրեկտորական շահերին, և նրանց չեն

խանգարում, բայց աշխատանքի պայմանները տարբեր գործերի մեջ տարբեր են լինում:

Դրա համար ել ասում են. - դարբիններն ունեն իրենց պրոֆեսիոնալ շահերը և գյուղատնտեսական ու անտառապայմն բանվորները՝ նույնպես իրենց շահերը:

Խորհրդային տնտեսության, ինչպես և գյուղական կամ անտառապայմն տնտեսության մեջ աշխատող անեն մի բանվորի և բանվորուհու հայտնի յե, թե ինչքան տարբեր պրոֆեսիաներ կան աշխատանքի այդ տարբեր շրջաններում. անտառապայմն տնտեսության մեջ, որինակ, կան փայտկարողներ, հետո՝ գերանները տեղափոխողներ և այլն. գյուղականում՝ դաշտային աշխատանք, անասուններ պահել և ուրիշ պրոֆեսիաներ։ Այդ նշանակում ե, վոր արտադրության ամեն մի ճյուղի մեջ կարող են լինել միքանի պրոֆեսիաներ։

Առաջ՝ մեզնում, իսկ կապիտալիստական լերկրներում հենց հիմա յել, ամեն մի միության մեջ մտնում են միայն միևնույն պրոֆեսիալի բանվորները։ Դրանք անվանվում են համբարային պրոֆմիություններ։ Ամեն մի համբարության մեջ մտնում ելին միայն միևնույն աշխատանքը կատարող բանվորները։ Բայց չառ լերկրներում և առանձնապես մեղ մոտ, ԽՍՀՄ-ում բանվորներն արդեն հասկացել են, վոր իսկական

պրոֆմիություն ունենալու համար պետք ե կողմակերպել վոչ թե համքարություններ, այլ այնպիսի միություններ, վորոնց մեջ մտնեն միենուույն արտադրության մեջ աշխատող բանվորները, ինչ պրոֆեսիա յել վոր ունենան նրանք, ինչպես մեզ մոտ գյուղատնտեսական և գրա հետել անտառապալին բանվորների միությունը։

Ահա, ինչու մեր պրոֆեսիոնալ միությունները կոչվում են արտադրական պրոֆեսիոնալ սիուրյուններ։

4. ԻՆՉՊԵՍ ԵՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՎՈՒՄ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋ ՅԵՎ ԻՆՉՊԵՍ ԱՅԺՄ

Ինչպես ասացինք, առաջներում պրոֆմիությունները կազմակերպվում ելին այնպես, վորնրանցից ամեն մեկը միանում եր միենույն պրոֆեսիալի, միենույն մասնագիտության - պարապմունքի տեր բանվորներին։ Մի պրոֆեսիալի պատկանողները մի միություն ելին կազմում, ուրիշ պրոֆեսիալի պատկանողները՝ ուրիշ՝ Այդպես, որինակ, գոյություն ունելին յերկաթագործների, մեքենավարների, հնոցավառների, ջրմուղում աշխատողների և այլ պրոֆմիություններ։ Մի խոսքով, վորքան մասնագիտություն կար, այնքան ել՝ պրոֆմիություն։ Բացի այդ, սկզբներում նույնիսկ այնպես եր, վոր պրոֆմիություն

ները կազմակերպվում ելին միայն մի քաղաքի սահմաններում, և մի քաղաքի միությունները վոչ մի կապ չելին ունենում մյուս քաղաքի մի ությունների հետ։ Ինչո՞ւ չեր ալգակա։

Հին Ռուսաստանում բանվորական և պրոֆեսիոնալ միությունների կազմակերպմանը խանգարում ելին կապիտալիստները և կալվածատերերը, Թագավորի կառավարությունն ոգնում եր կապիտալիստներին և կալվածատերերին շահագործելու բանվորներին և գյուղացիներին, և միայն վերին խավերին եր թույլ տալիս կազմակերպություններ ունենալու։ Նա բանվորներին ազատություն չեր տալիս և արգելում եր բանվորներին միություններ կազմակերպելու ժողովանելու համար բանվոր երին բանտ ելին նստեցնում աքսորում ելին։ Բանվորներն ստիպված ելին իրենց ժողովները հավաքել դադանի, գաղտնի տեղերում։ Այդ պատճառով ել, պարզ ե, մի քաղաքի բանվորների համար դժվար եր կապ պահպանել մյուս քաղաքի բանվորների հետ։ Բացի դրանից, կառավարությունը և կապիտալիստները կաշառված մարդիկ, վոստիկանական գործակալներ և լրտեսներ ելին մացնում այդ միությունների մեջ, վորոնք և մատնում ելին նրանց։ շատ անդամ այդ նպատակի համար ողտագործում ելին անդիտակից մութ բանվորներին, զու

ըսնք տերերի կողման ելին լինում և խանգարում
ելին միություններ կտղմակերպելուն։ Ինարկե,
կապիտալիսանների համար այդ շատ ձեռնաու յեր,
քանի վոր, յերբ վոր բանվորների մեջ միություն
չեր լինում, նրանց հետ կովելն ավելի հեշտ եր
լինում։ Գյուղատնտեսական և անտառային բան-
վորների դրությունն ավելի վատ եր։ Բայց փոր-
ձով, միության աշխատանքի շնորհիվ բանվոր-
ները սովորում և հասկանում ելին, թե ինչ ձեկի
միություն պիտի ունենալ, վոր նրանց բանվո-
րական շահերն ավելի լավ պաշտպանի։

Իսկ ներկայումս մեզ մոտ՝ ԽՍՀՄ.ում ինչ-
պես եւ Յեթե վերցնենք մի պրոֆեսիալի բան-
վորներին, որինակ, դարբիններին, մենք կտես-
նենք, վոր յեթե նրանք աշխատում են գործարա-
նում՝ այլ բան եւ, քան յեթե նրանք աշխատում
են խորհրդային տնտեսության մեջ. ճիշտ ե, նը-
րանց պրոֆեսիան, աշխատանքը միևնուն ե,
բայց տարբեր են աշխատանքի պարմանները խոր-
հրդային տնտեսության մեջ և տարբեր գործա-
րանում. այստեղի և այնտեղի բանվորներն ի-
րենց դրությունը բարելավելու համար տարբեր
պահանջներ են գնում։ Յեվ շատ պարզ ե, վոր
յեթե յես աշխատում եմ խորհրդային տնտեսու-
թյան մեջ, ապա յես շատ լավ գիտեմ, թե ինչ
և հարկա լոր պահեղի բանվորների դրությունը

լավացնելու համար, ինչպիսի աշխատանք ել վոր
կատարելիս լինեն նրանք ալդաեղ, խորհրդակին
տնտեսության մեջ:

Խորհրդակին տնտեսության մեջ աշխատող
բոլոր տեսակի բանվորների դրությունը, լինեն
նրանք դարբիններ, կթողներ, թե դաշտում աշ-
խատողներ, շատ նման ե միմյանց և նրանց
շահերը պաշտպանելու համար շատ նպատակա-
հարմար ե, փոր ամբողջ արտազրության մեջ աշ-
խատող բոլոր բանվորները միանան մի պրոֆ-
միության մեջ.

Առաջ, կապիտալիզմի ժամանակ, միենույն
գործարանում աշխատող բանվորները վոչ թե մի
միության մեջ ելին մտնում, այլ տարբեր, նա-
յած պրոֆեսիալին. մեքենավարը մտնում եր
մեքենավարների պրոֆմիության մեջ, հյուսնը՝
հյուսների, ջուլհակը՝ ջուլհակների, սեադործ բան-
վորը՝ սևագործների և այլն: Դրա համար ել, յերբ
փոր բանվորները դժգոհ ելին լինում իրենց դրու-
թյունից, նրանք չելին կարող բոլորը միասին
միանգամից դուրս գալ և իրենց պահանջները
դնել, քանի վոր տարբեր պրոֆեսիալի, այսինքն
տարբեր աշխատանք կատարող բանվորները պատ-
կանում ելին տարբեր միությունների և այդ մի-
ությունները պիտի հավաքվելին և խորհրդակցե-
լին ջոկ-ջոկ-դարբինները՝ ջոկ, ջուլհակները՝ ջոկ

և աղն։ Յեվ պատահում եր, որինակ, վոր մեքենավարները և ատաղձագործները վորոշում ելին գործադուլ անել, իսկ ջուլհակները, սեագործքանվորները կամ ուրիշները շարունակում ելին աշխատել։ Յեվ տիրոջ համար շատ հեշտ ել լինում կռ.վել, քանի վոր հարկավոր եր միայն մեքենավարներին և ատաղձագործներին փոխել նորերով։ Նրանք այդպես ել անում ելին։ — պարզ ե, վոր կապիտալիստական յերկրներում նույնալիս ձեռնտու չի միևնույն գործարանում միքանի պրոֆմիություններ կազմակերպել ըստ պրոֆեսիալի, ավելի ձեռնտու յերորդին միանալ մի արտադրական միության մեջ։ Բայց դեռ ևս կապիտալիստական յերկրների բոլոր բանվորները չեն հասկացել դրա ոգուտը։

Մեզ մոտ բանվորներն իրենց դրությունը բարելավելու համար մասնակցում են սոցիալիստական հանրապետությունների և առավել ևս սոցիալիստական տնտեսության շինարարության գործին։ Վորպեսզի հաջողությամբ տարվի այդ աշխատանքը, ամեն մի միություն պիտի լավ ծանոթ լինի իր արտադրական աշխատանքին։ Թե սոցիալիզմի կառուցման աշխատանքին հաջողությունը մասնակցելու և թե իր զահերը պաշտպանելու համար պետք ե միանալ և վոչ թե ջոկակ աշխատել։ Դրա համար ել, չնայած վոր մեր

և կապիտալիստական լերկըների բանվորական կաղմակերպությունների անելիքները տարբեր են, այնուամենայնիվ բանվորների շահերը պահանջում են մեզ մոտ ևս միենուին ձեռվ կաղմակերպվել՝ ըստ արտադրության, այն ե, մի ձեռնարկության բանվորներին՝ մի միության մեջ։ Որինակ, խորհրդալին տնտեսության բալոր բանվորներն առանց բացառության պիտի մտնեն մի միության մեջ։

ԽՍՀՄ-ում բալոր տեսակի կտորեղեն պատրաստող գործարանների բոլոր բանվորները մըտնում են մանածագործների միության մեջ, կաշվի և կոշկեղենի գործարանների բանվորները՝ կաշեգործների միության մեջ, մետաղագործները՝ մետաղագործների։ Մի խոսքով, արտադրության ամեն մի ճյուղը մի միություն ե կաղմում։ Դրահամար ել, քնչպես առաջ ասել ենք, մեր պրոֆմիությունները կոչվում են արտադրական միություններ։ Այժմ գոյություն չունեն առանձին դերձակների և առանձին դերձակուհիների միություններ, այլ կա կար ու ձեմ միություն, չկան կոչկակարների և մորթի շինողների միություններ, այլ՝ միայն կաշեգործների։ Զկան բարրակների, հովիվների, անտառալին բանվորների, գյուղատնտեսների, հողաչափների և այլ միություններ, այլ կա միայն ԽՍՀՄ-ի Գյուղանառ միություն,

վորի սեջ մտնուս են զյուղատնեսական յեվ ան-
տառային վարձով աշխատող բոլոր բանվորները,
ծառայողները յեվ մասնագիտները (սպեցիոներ):
Այդպես գոյութիւն չունեն, որինակ, Մոսկվայի,
Սամարայի կամ Ռևերայնայի կաշեգործների, հող-
անտառ և աղ միություններ, աղ ամբողջ Միու-
թյան մեջ գոյութիւն ունեն կաշեգործների մի
միություն, մի գյուղանտառ միություն և ալն.
և զրանցից ամեն մեկը տեղերում ունի իր հան-
րապետական, լեր՝ բայցին, նահանգական, գավա-
ռային և շրջանավիճն բաժինները և ալն:

Ինչպես մանածարային մի գործարանի, այն-
պես և մանածարային ամբողջ արտադրության բան-
վորները, ինչպես խորհրդային մի վորու տնտե-
սության, այնպես և զյուղատնտեսության մեջ
աշխատող բոլոր բանվորները շահագրգուված են,
վոր մեր բոլոր տնտեսությունները, մեր ամբողջ
արդյունաբերությունը հաջողությամբ աշխատի:
Ինչպես ամեն մի բանվոր, այնպես ել նրանց
պրոֆիլիությունները պիտի ուշադրությամբ հե-
տևեն, թե ձեռնարկի դեկավարներն ինչպես են
տանում գործը: Մեր ամբողջ լերկրի բարեկե-
ցությունը կախված է նրանից, թե ինչպես ե
տարկում գործը խորհրդավիճն տնտեսության մեջ,
գործարանում, անտառալին ձեռնարկություննե-
րում և աղն, թե ինչ դրության մեջ են արդյուն-

նաբերության այս կամ այն ճյուղը – մանածագործարանը, շաքարի գործարանները, փայտ մշակող գործարանները և այլն։ Դրանից ե կախված և աշխատավարձի չափը։ Վորքան լավ դրված լինի գործը տնտեսության մեջ, վորքան նա պետությանն ավելի մեծ արդյունք տա, այնքան ել ավելի լավ կլինի աշխատանքի պարմանները և բանվորների դրությունն այդ տնտեսության մեջ։ Դրան պիտի ուշի՝ ուշով հետեւն միենուն տընտեսության, միենուն արտադրականն ձեռնարկում աշխատող բանվորների միությունները։

5. ԻՆՉՊԵՍ Ե ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳՅՈՒՂԱՆՏԱՐՄԻՌՅՈՒԹՅՈՒՆԸ

ԽՍՀՄ-ի Գյուղանտեսական և Անտառային Բանվորների Միության մեջ մտնում են խորհրդային տնտեսություններում, անտառապետություններում անտառանյութեր պատրաստող և տեղափոխող ձեռնարկներում վարձով աշխատող բոլոր բանվորները, ծառայողները և մասնագետները, նշանակում են մեր միության մեջ մտնում են. – գյուղացիների մոտ աշխատող բատրակները, հովիվները, հոտաղները, խորհրդային տնտեսության բանվորները, այն ե՛ վարողները, հընե ձողները, այգեպահները, թռչնապահները, անառնապահները, կթողները, կառապահները, ձիա-

ողանները, տավարածները, արակտորի վրա աշ-
խատողները, խորհանտեսության դարբինները,
մեքենագործները, ապա շաքարի, բամբակի, խա-
ղողի և ծխախոտի դաշտերում աշխատող բան-
վորները, փայտահատները, անտառալին պահա-
պանները և հսկիչները, անտառապետները, ան-
տառագետները, գյուղանտեսները, հողաչափները
և գյուղական ու անտառացին տնտեսության մեջ
աշխատող բոլոր բանվորները, ծառայողները և
մասնագետները։ Միության մեջ կարող են մըտ-
նել նրանք, վորոնք ապրում են վոչ թե իրենց
տնտեսությունից ստացած արդյունքով, այլ գըլ-
խավորապես՝ իրենց աշխատավարձով։ Իսկ ինչ
պես են այդ բոլոր բանվորները միանում։

Ինչպես արդեն ասել ենք, գյուղատնտեսա-
կան և անտառացին բոլոր աշխատավորները բո-
լորը միևնույն միության մեջ են մտնում։

Այդ միության գլուխ եւ կանգնած Գյուղ-
անտառ Միության Համամիութենական Համագու-
մարում ընտրած Կենտրոնական Կոմիտեն։ Հանրա-
պետական կամ նահանգական կազմակերպության
գլուխ եւ կանգնած և ղեկավարում եւ Միության
հանրապետական կամ նահանգական բաժինը և
այլն։ Այնպես, վոր լուրաքանչյուր կազմակեր-
պություն վոչ թե անկախ ե, այլ լենթարկում
ե իրենից բարձր որդանի ղեկավարությանը։ Ամ-

բողջ միության գլուխ կանգնած Կենտկոմը ղեկավարվում է Համամիութենական Համագումարի կողմից հաստատված կանոնադրությամբ և նրա հանած վորոշումներով և բանաձևերով։ Գյուղանտառ Միության վերջին համագումարը կայացել է 1926 թվի հունվարին դրա վորոշումներով ել ղեկավարվում է Միությունը։

Հանրապետական, լերկրային, նահանգական և գավառական բաժինների և բաժանմունքների վարչություններն ընտրովի լեն։ Նրանք ընտրվում են համապատասխան համագումարներում։ Ընտրված վարչությունները լինթարկվում են հանրապետական միութենական բարձր մարմիններին և առաջնորդվում են նրանց ցուցմունքներով։ Մեզնում, Հայաստանում Գյուղանտառ միության ամբողջ աշխատանքները ղեկավարում են կենտ. Վարչությունը նա լի, վորոշուղություն ե տալիս մեր միության աշխատանքներին։

Յուրաքանչյուր տնտեսության մեջ աշխատող բանվորներն ու ծառայողներն ընդհանուր ժողովներ են ունենում և քննության են առնում իրենց հետաքրքրող հարցերը և նրանց մասին վորոշումներ են հանում։ Այդ ժողովներում ել նրանք իրենց միջից կոմիտեներ են ընտրում։ Այդ կոմիտեները կոչվում են բանվորական կոմիտեներ կամ բանկոմիներ։

իսկ ինչի համար են ընտրվում այդ կոմիտեները: Ընդհանուր ժողովներում, վորտեղ մեծ թվով մարդիկ են լինում, հնարավոր ե հարցերը բազմակողմանի քննել, պարզել և գործնական վորոշումներ հանել: Բայց չե՞ վոր պետք ե այդ վորոշումները կյանքում իրագործել: իհարկե, մեզնից ամեն մեկը պարտավոր ե անել այդ. բանը նրանումն ե, վոր լեթե բոլորը միանգամից ուղենան իրագործել այդ վորոշումները՝ վոչինչ չի դուրս գալ գրանից. գործը կանոնավոր տանելու համար պետք ե մեկ կամ միքանի հոգու միջոցով անել. գրա համար ել ընտրվում են կոմիտեները:

Կոմիտեն ունենում է իր նախագահը և քարտուղարը. այս վերջինը գրի լե առնում ընդհանուր ժողովի վորոշումները, այսինքն արձանագրություններն ե կազմում:

Ցենթրալընք, թե ընդհանուր ժողովում խոսվում ե այն մասին, վոր աշխատավարձն անկանոն ե վճարվում և ժողովը վորոշում ե, վոր աշխատավարձը պիտի տրվի կանոնավոր կերպով՝ ամիսը լերկու անգամ:

Այդ վորոշման մասին խոսելու և պայման կապելու համար կարիք չկա, վոր բոլորը միասին գնան տնտեսության կառավարիչի մոտ. այդ բանն անում ե կոմիտեն: Հետևելով ընդհանուր ժո-

զովում կարելի յե ստուգեր թե ինչ և արված վորոշումը կատարելու համար կամ թե չե, ընդհանուր ժողովում խոսք և յեզել բնակարանների վատության մասին և բանվորները վորոշել են նայել բոլոր բնակարանները և պարզել, թե ինչ պիտի արվի բնակարանալին պալմանները լավացնելու համար ինարկե, անմիտ բան կատացվեր, յեթե բոլորը միասին սկսելին բնակարանները ման գալ Բանվորական կոմիտեները հենց նրա համար են, վոր նման գործերը կատարեն:

Բացի ընդհանուր ժողովների վորոշումներից, բանկոմիներն ուրիշ գործեր ել ունեն անելու: Այնքան հարցեր և կարիքներ կան, վոր հաճախ գուցե և կարիք լինի ամեն որ հավաքվել. հոչ չե կարելի, վոր ամեն որ բոլորը հավաքվեն: Ասենք, մեկին աշխատավարձը պակաս են տվել, մյուսը բնակարան չունի, յերբորդին վիրավորել ե տնտեսավարը. նման հարցերի մասին բանվորները դիմում են իրենց կոմիտելին և նա կամ ինքն և վորոշում հարցերը և կամ թե չե՝ հարցերը քննելու համար ընդհանուր ժողով և հրավիրում: Կոմիտելի անդամների թիվը լինում ե՝ նայած հիմնարկի բանվորների և ծառայողների թվին, Ընտրում են 3 հոգի, յեթե բանվորների և ծառայողների թիվը 25-ից մինչև 50 ե. յեթե ավել ե՝ ավել են ընտրում. կարելի յե ընտրել

մինչև 9 կամ 11 հոգի, յերբ 300 կամ ավել են լինում բանվորները և ծառայողները։ Յերբ միության անդամների թիվը 25-ից պակաս ե՝ կոմիտե ալլես չեն ընտրում, այլ ունենում են միայն մի պրոֆելիազոր։

Կոմիտեներ ընտրվում են և այն տեղերում, վորտեղ առանձին անտեսությունների մեջ աշխատող բատրակներ և հովիվներ կան. այդ կոմիտեները կոչվում են զյուղբանկոմիներ. սրանք ել, ինչպես և բանկոմիները՝ պաշտպանում են իրենց միության անդամների – հովիվների, բատրակների շահերը, ընդհանուր ժողովներ ևն հրավիրում, արձանագրություններ են կազմում, աշխատանքալին պայմանագրեր են կնքում, բանվորներից բողոքներ են ընդունում, հետաքրքրություն են նրանց դրությամբ և հսկում են, վոր նրանց չզրկեն, չճնշեն և այլն։

Գյուղբանկոմիներն ընտրվում են այն տեղերում, վորտեղ մեր միությունը 25 անդամից պակաս չէ։ Այն տեղերում, վորտեղ միությունը դրանից քիչ ե՝ գործերը տանում են արևան գյուղանկոմը՝ գյուղի պրոֆլիազորի միջոցով։

Մի գավառակում կամ շրջանում կարող են միքանի բանկոմիներ և գյուղկոմիներ լինել. աշխատանքը համաձայնեցրած և կանոնավոր տանելու համար գավառակում կազմակերպվում են ցզա-

նային կոսիտեներ: Այդ կոմիտեները ընտրվում
են շրջանալին համագումարներում: Համագու-
մարներին մասնակցում են գավառակի բոլոր
դյուզերից լեկած պատգամավորները, վորոնք
ընտրվում են միության անդամ լեզող բատրակ-
ների, խորհրդալին և անտառալին տնտեսություն-
ների բանվորների և այլ մասնագեաների կող-
մից: Այդ համագումարներն անվանվում են շրր-
ջանալին կոնֆերենցիաներ: Ինչպես այդ կոն-
ֆերենցիաները այնպես ել շրջանալին կոմիտե-
ները քննության են առնում, թե ինչպես պի-
տի տարվի միության գործն ամբողջ գավառա-
կում — շրջանում և ինչպես պիտի միության ան-
դամների գրությունը բարելավի՞լ:

Մի գավառի բոլոր շրջանալին կազմակեր-
պությունները միանում են և կազմում են մի
գավառային բաժանմունք վորը և զեկավարում ե
գավառի բոլոր միությունները: Դավառալին մի-
ություն կազմակերպելու համար շրջանալին մի-
ություններն ուղարկում են իրենց ներկայացու-
ցիչներին գավառալին համագումարին մասնակ-
ցելու: Դավառալին համագումարները և նրանց
ընտրած գավառալին վարչություններն ել իրենց
հերթին քննության են առնում ամբողջ գավա-
ռին վերաբերող խնդիրները և հարկավոր ցուց-
մունքներն են տալիս շրջանալին կոմիտեներին:

Վորտեղ կան նահանգներ, այնտեղ հրավիր-
վում են և նահանգական համագումարներ, վո-
րին մասնակցում են գավառների պատգամա-
վորները։ Մեզ մոտ, քանի վորնահանգներ չ'կան,
գավառալին պատգամավորները հավաքվում են և
մասնակցում են Հայաստանի Գյուղանտառ միու-
թյան հանրապետական համագումարին։ Բոլոր
նահանգների և փոքր հանրապետությունների կազ-
մակերապություններն իրենց հերթին՝ իրենց ներ-
կայտցուցիչներն են ուղարկում Համամիութե-
նական համագումարին մասնակցելու։ Այդ հա-
մագումարը Գյուղանտառ կազմակերպություն-
ների ամենաբարձր մարմինն է ամբողջ միու-
թյան մեջ։ Նա կարող է վոչնչացած համարել
հանրապետական, նահանգական, գավառալին և
շրջանային համագումարների սխալ վորոշումնե-
րը, կարող է ընդունել և փոփոխության լենթար-
կել միության կանոնադրությունը, կարող է ա-
մեն տեսակի վորոշումներ հանել թե միության
կազմակերապությունների և թե անդամների վե-
րաբերյալ։ Այդ համագումարում ընտրվում է Կենս-
տրուական կոսիտեն (վորին կարճ ասում են կենտկոմ
կամ կկ)։ Մինչև Միութենական հետեւալ հա-
մագումարը կենտկոմն աշխատում է իբրև լիազոր
և ընդհանուր զեկավար ամբողջ միության հա-
մար։

Այսպիսով, մեր պրոֆմիությունը, կազմակերպված ե հետևյալ ձևով. - առաջ գալիս են բանվորների յեվ բանվորունիների ընդհանուր ժողովները յեվ նրանց ընտրած բանկոմիները կամ գյուղբանկոմիները, հետո՝ ուղանային կոմիտեները, զավառային համագումարները յեվ ուղանային կոմիտեները, զավառային համագումարները յեվ զավթիները, նահանգական համագումարները յեվ նահանգական բաժինները. ապա՝ հանրապետական համագումարները յեվ նրանց ընտրած կենտրոնական վարչությունները յեվ վերջապես Միութենական համագումարը յեվ նրա ընտրած կենտրոմը:

Համագումարները և կոնֆերենցիաները մըշտական որդաններ չեն. նրանք հավաքվում են, վորոշումներ են հանում և ընտրում են մշտական աշխատող մարմիններ ու ցրվում են. Ընտրված մարմիններն աշխատում են մինչև մյուս համագումարը կամ կոնֆերենցիան. Այդ մարմիններն աշխատանքը տանում են այսպես. Միություն կենտրոնական յենթարկվում են կենտրոնական վարչությունները (հանրապետությունների մեջ) և նահանգական բաժինները, նրանց յենթարկվում են գավառալին բաժինները, գավրաժիններին յենթարկվում են շրջանավիճ կոմիտեները և վերջիններին՝ բանկոմիները և գյուղբան-

կոմիերը Բանկոմիերից և գլուղբանկոմիերից ցածր տղես ուրիշ որդաններ չկան, դրա համար ել սրանք համարվում են միության սկզբնական բջիջներ: Այնտեղ, վորտեղ բանվորների թիվը պահանջված բանակից քիչ ե, ինչպես ասացինք, կարող ե ընտրվել պրոֆլիագոր. գլուղում նման դեպքերում ընտրվում ե գլուղպրոֆլիագոր, սրանք կատարում են բանկոմիերի աշխատանքը:

6. ՈՎ ԿԱՐՈՂ Ե ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ԼԻՆԵԼ ՑԵՎ ՈՎ ԶԻ ԿԱՐՈՂ

Գլուղատնտեսական և անտառալին բանվորների միությունը նախ և առաջ բանվորական միություն է: Ինչպես ասացինք, բանվոր կոչվում են այն մարդիկ, վորոնք ապրում են վարձու աշխատանքով, լինի դա մասնավոր տնտեսության մեջ, թե պետական, հասարակական, կոոպերատիվ կամ այլ տեսակի տնտեսության մեջ: Դրա համար ել պարզ ե, վոր բանվորական միության մեջ կարող են մտնել միայն վարձու բանվորները:

Բայց պետական կամ մասնավոր տնտեսությունների մեջ աշխատող բոլոր բանվորները չեն կարող մտնել միության մեջ: Կան մարդիկ, վորոնք ամբողջ տարին աշխատում են իրենց տըն-

տեսության մեջ և միայն մի-էերկու շաբաթ՝ ու-
րիշ տեղերում, իբրև վարձու բանվորներ։ Ալդ-
պիսիները կարժղ են արդյոք միության մեջմըտ-
նել։ - Իհարկե, վհչ, Նրանց չի կարելի վարձու բան-
վոր համարել, քանի վոր նրանք իրենց սեփա-
կան տնտեսությունն ունեն և նրանով ել ապ-
րում են. վարձու աշխատանքը նրանց համար
լրացուցիչ նշանակություն ունի։ Ալդ պատճա-
ռով ել Գյուղանտառ միության 5 ըդ համագու-
մարի վորոշումների մեջ ասված ե, վոր միու-
թյան մեջ պետք եղբավել առաջին հերթին գյու-
ղի պրոլետարական տարրերը, ալսինքն նրանց,
վորոնք մշտապես աշխատում են իբրև վարձու
աշխատավորներ, վորոնց ապրուստի միակ աղ-
բյուրն իրենց աշխատավարձն ե։ Բացի դրանցից,
պետք ե ասել, վոր միության մեջ կարող են
մտնել ուրիշ տնտեսություններում աշխատող-
ներից նրանք, վորոնք թեև գյուղում կարող են
հող կամ տնտեսություն ունենալ բայց վո-
րոնց վարձու աշխատանքը լերկար ե տեսում և
նրանց ապրուստի գլխավոր հիմքն ե կազմում.
Դրա համար ել վորոշված ե, վոր լեթե մեկն աշ-
խատել ե իբրև վարձու բանվոր լերկու տարի
իրար լետեից և ամեն մի տարվա ընթացքում
հինգ ամիս անընդհատ կամ ընդհատումներով 7
ամիս՝ կարող ե մտնել գյուղանտառ բանվոր-
ների պրոֆմիության մեջ։

Այն գլուղացիները, վորոնց վարձու աշխատանքը պատահական բնավորություն ունի, և վորոնց ապրուստի գլխավոր աղբյուրն իրենց տընտեսությունն եւ միության մեջ չեն ընդունվում:

Այդ կարգը սահմանված են նրա համար, վորպեսզի միությունը միատեսակ կազմ ունենա, վորպեսզի միության անդամները միատեսակ շահեր ունենան և բոլորն ել վարձու բանվորներ լինեն:

Յեթե միության մեջ ընդունելին և նրանց, վորոնք պատահական կերպով գնում են ալստեղայնտեղ աշխատելու կամ թե չե մենակ են աշխատում իրենց տնտեսության մեջ՝ միությունն այլևս բանվորական միություն չեր լինի։ Այդ, իհարկե, շատ սխալ կլիներ։ Միությունը գոյություն ունի նրա համար, վոր պաշտպանի վարձու աշխատող բանվորների շահերը և թույլ չտա, վոր նրանց շահագործեն։ Դրա համար ել միության մեջ կարող են մտնել այնպիսի մարդիկ, վորոնց շահերը մեկ են, ալսինքն վարձու բանվորները։ Ինչ դուրս կգար, յեթե մենք սկսեցինք ընդունել միության մեջ և վարձու բանվորին և գլուղացուն։

Բանվորը, բատրակը ուզում են, վոր ձեռնտու գնով վարձվեն։ Յեթե միության մեջ գլուղա-

ցիներ լինելին, նրանք, պարզ ե, վոր իբրև վարձողներ պիտի հակառակ գնալին դրան։ Յեթե նման դեպքերում գյուղացիները շատ լինելին միության մեջ, պարզ ե, վոր միությունը կսկսեր պաշտպանել վոչ թե բանվորների շահերը, այլ գյուղացիների։

Միության մեջ կարող են ընդունվել վոչ միայն խորհրդակին տնտեսության մեջ աշխատող բանվորները և ծառալողները այլև տնտեսության կառավարիչը (անտեսության վարչությունը)։ Բայց նրան չի կարելի բանկոմի անդամ ընտրել։ Յեթե անտեսությունը պատկանում է մասնավոր մարդու կամ մի խումբ մասնավոր ձեռնարկատերերի՝ ապա կառավարիչը և առհասարակ վարչական պաշտոնյանները չեն կարող միության մեջ ընդունվել։ Այն գյուղացիները, վորոնք խորհրդակին տնտեսության մեջ աշխատում են կիսու, նույնպես չեն կարող մտնել միության մեջ։ Անտառապետության աշխատակիցները — անտառալին պահապանները, մասնագետները, անտառապետները և մլուս ծառալողները կարող են մտնել միության մեջ, յեթե նրանք իրենց սեփական տնտեսության մեջ վարձու բանվորներ չունեն։

Բացի նրանցից, վորոնց մասին մենք ասացինք, միության մեջ չեն կարող մտնել նաև՝

տերտերները, տիրացուները, նախկին կալվածա-
տերերը, ուրլազդնիկները, պոլիցիական պաշտոն-
յաները և ժանդարմերը, ինչպես և նրանք, վո-
րոնք զենքը ձեռներին կովել են սպիտակների
հետ միասին բանվորների դեմ, իբրև նախկին
կալվածատերերի և բուրժուաների կողմանակից-
ներ. դրանց նմանները միության մեջ չեն կա-
րող ընդունվել նույնիսկ այն դեպքում, յեթե
նրանք այժմ վարձու աշխատանք կատարելիս լի-
նելին:

7. ԻՆՉ Ե ԴԻՍՑԻՊԼԻՆԱՆ, ԻՆՉԻ ՀԱՄԱՐ Ե ՆԱ

ԽՍՀՄ-ում, բոլոր հանրապետություննե-
րի գյուղատնտեսական և անտառալին բոլոր բան-
վորները և ծառալողները մի միության մեջ են
մտնում: Այդ միությունը կոչվում ե ԽՍՀՄ-ի
Գյուղատնտեսական և Անտառալին բանվորների
միություն, կամ կարճ՝ — Գյուղանտառ Միու-
թյուն:

Միությունը կարող ե իր կազմակերպու-
թյունն ունենալ ամեն մի խորհրդավորն տնտե-
սության, անտառապետության մեջ և ամեն մի
գյուղում:

Այդ կազմակերպությունները տեղերում ան-
կախ կարող են աշխատել իրենց վերաբերող
գործերի սահմաններում ամբողջ շրջանին վե-

բարերող գործերին նա չի կարող խստնվել, քանի վորինքը շրջանի կազմակերպության մի մասն ե կազմում միայն։ Շրջանային կազմակերպությունն ել կարող ե զբաղվել միայն իր շրջանի գործերով և չի կարող խստնվել ամբողջ գայլառին վերաբերյալ գործերի մեջ։ Նման հարցերը վերաբերում են գավառային համագումարին կամ գավառաժնին և այլն։

Մեր կազմակերպությունն ամուր կերպով միացած ե գիսցիպինայով։

Ի՞նչ բան ե միության դիսցիպլինան.

Դիսցիպլինան այն կարգն ե, վորը պահանջում է պարտադիր և ճշտությամբ կատարել միության կանոնադրության կետերը և միութենական մարմինների վորոշումները։ Ո՞վ ե այդ կարգը սահմանում խորհրդացին տնտեսության անտառապետության կամ զյուղի բանվորների համար։ Այդ կարգը սահմանում են իրենի, միության անդամները՝ բանվորները, ծառայողները և մասնագետներն իրենց ընդհանուր ժողովներում։ բայց կարող են ասել, թե՝ հո ընդհանուր ժողովն որենք չի, թե զեռևս բավական չի, վոր ընդհանուր ժողովը վորոշումներ ե հանում, քանի վոր մենք, կարող ե պատահել, վոր այս կամ այն վորոշման հետ համա-

ձան։ Հենք։ Դրա համար միության մեջ հետևյալ կարգը գոյություն ունի. յենթանդրենք, թե ընդհանուր ժողովում 20 հոգի ասում են, վոր այսինչ բանն այսպես պիտի արվի, իսկ Յ հոգի նրանց հետ համաձայն չեն, յեթե այդ 20 հոգին վորոշեցին այսպես անել, ապա մնացած Յ-ը պիտի յենթարկվեն մեծամասնության և նրանց վորոշածը կատարեն։ Հին առածն ասում ե - «Մի խելքը լավ ե, բայց յերկուսն ավելի լավ»։ Այսպես ել նույնն ե։ ԶԵ վոր մինչև վորոշում հանելը հարցը ծեծվում, քննվում ե. ամեն մեկն իրավունք և հնարավորություն ունի խոսելու և իրեն կարծիքն ասելու. յեթե նրա կարծիքն ոգտակար կլինի բոլորի շահերին, նա կարող ե համոզել։ Յեվ ամեն մեկը պարտավոր ե խոսել, յերբ վոր նա ասելու բան ունի. բոլորն ել կլսեն այդ կարծիքը և կքննեն։ Յեթե մեծամասնությունը համաձայն կլինի այդ կարծիքի հետ, ապա վորոշում կկայացնի։ Փոքրամասնությունը, վորը դեմ ե յեղել այդ կարծիքին՝ պետք ե գիտակցաբար յենթարկվի մեծամասնության վորոշումին։

Մեծամասնության կամքին յենթարկվելը դիսցիպլինալի հիմքն ե կազմում. և դիսցիպլինան պիտի լինի հոժարակամ, նա պիտի բղխի բանվորական ռահի գիտակցությունից։ Հարցերը մե-

ծամասնութիւնամբ վորոշում են վոչ միայն ընդհանուր ժողովներում, այլև համագումարներում: Համագումարներում ընտրվում են գալառապալին, նահանգական և հանրապետական վարչությունները և կենտրոնը և դրանք բոլորը մեր ընտրված զեկավարներն են:

Ի՞նչու փոքրամասնությունը պիտի լենթարկվի մեծամասնության և ի՞նչու միության ստորին մարմինները պիտի լենթարկվեն բաձր ղեկավարորդաններին: Յեթե այդպես չլիներ, մեկը մի կողմը կքաշեր, մյուսը՝ մի ուրիշ կողմ և հնարավոր չեր լինի համերաշխատանք տանել: Համերաշխատանքն անհրաժեշտ է, վորապես զի միությունն ամուր և ուժեղ լինի:

Որինակի համար վերցնենք մի այսպիսի դեպք մի շրջանում բերքը լավ է, իսկ հնձող չի ճարվում, քիչ կա, բանվորի գինը բարձրանում է և յեթե ավել ել վճարեա՝ բանվոր չես ճարի. միենուն ժամանակ մի ուրիշ գավառում գործադրկություն է, բանվորներն աշխատանք չեն ճարում և քաղցած են մնում, պարզ է, վոր սրանց ոգնելու համար սրանց պետք ե տեղափոխել այնտեղ, ուր վոր գործ կա: Բայց առաջին շրջանի միության բաժանմունքը վախենալով, վոր յեթե ուրիշ շրջաններից իրենց մոտ նոր բանվորներ գան աշխատավարձը կարող է իջնել՝ վորոշում ե կա-

յացնում, վոր իբր թե իրենց գավառում նոր բան-
վորների պահանջ չկա: Նման վորոշումն, իհարկե,
սխալ պիտի համարել, քանի վոր միության
նպատակն ե ոգնել միության բոլոր անդամներին
և վոչ թե միայն իրենց շրջանի միության ան-
դամներին. և կենտկոմը միանգամայն արդարացի
կլինի, յեթե վորոշի գործազուրկ շրջանից աե-
ղափոխել բանվորներին այնտեղ, ուր պահանջ կա.
մի տարի մի շրջանում ե լավ և դա պիտի ոգնի
գործազուրկ շրջանին, մյուս տարին՝ մյուսում լավ
կլինի և նա կոդի: Այս ձեռվ կարելի կլինիմիմիայն
միմյանց ոգնել. դրա համար ել կենտկոմի վո-
րոշումը միանգամայն տեղին կլինի և գավառա-
յին բաժինները պիտի յենթարկվեն նրան: Մի-
ության կանոնադրությունը հաստատվում ե Հա-
մամիութենական համագումարում. դրա մեջ գըր-
ված են այն բոլոր կանոնները, վորոնց կատարե-
լու համար մենք բոլորս տվել ենք մեր համա-
ձայնությունը, քանի վոր կանոնադրության հաս-
տատմանը մամնակցում են մեր ընտրած պատգա-
մավորները: Այդպես մենք պիտի վարվենք նրա
համար, վոր ուժեղացնենք մեր միությունը և մեր
գրությունը բարելավենք. դրա համար ել պարզ
է, վոր միության անեն մի անդամ պարտավոր
ե յենթարկվել այդ կանոններին: Յերբ վոր մենք
կատարում ենք համագումարների վորոշումները

և մեր կանոնադրությունը, մենք ասում ենք, վոր մենք լենթարկվում ենք մեր միության դիսցիպլինալին։ Բացի դրանից, միության ամեն մի անդամ պարտավոր է կատարել այն հանձնարարությունները, վորոնք տրվում են նրան ընդհանուր ժողովի կամ միության որդանների կողմից։ Ասենք, թե ընդհանուր ժողովը վորոշել է, վոր, որինակ, Կիրակոսյանն այսինչ աշխատանքը պիտի կատարի. յեթե նա հրաժարվի դրանից և չուզենա կատարել այդ վորոշումը՝ նա դրանով խախտած կլինի միության դիսցիպլինան և պարզ է, վոր չի կարող միության վստահելի և լավ անդամ համարվել։

Մի բան ել է պահանջում մեր միության դիսցիպլինան. — ամեն մեկը կանոնավոր կերպով պիտի մուծի իր անդամավճարը։ Միության աշխատանքների համար փող է հարկավոր, քանի վոր աշխատանք տանելու համար հարկավոր է ունենալ գրասենյակ աշխատողներ, փող է հարկավոր նաև միության գործազուրկ կամ կարիք ունեցող անդամներին ոգնելու համար, համագումարներ հավաքելու, գրքեր տպելու, անդամներին, գրագիտություն սովորեցնելու, գործի համար տեղերը մարդիկ ուղարկելու և այլ նպատակների համար։

Անդամավճարները հավաքում են հավաքա-

բարները, վորոնք լինում են միության անդամներից։ Միության ամեն մի անդամ, վո, ը ծառալում ե (գործազուրկները գործ չունեցած ժամանակի համար անդամավճար չեն տալիս) իր աշխատավարձից վճարում ե 2 տոկոս, աչսինքն աշխատած ամեն մեկ ոռություց 2 կոպեկ։ Միությունն այդ փողով ե ապրում։ Միության դիսցիպլինան պահանջում ե անդամավճարները կանոնավոր կերպով մտցնել։ Ով վոր 3 ամիս շարունակ անդամավճար չմտցնի՝ միությունից դուրս ցեկած ե համարվում*):

Այսպիսով, մենք տեսնում ենք, վոր միության դիսցիպլինան կայանում ե նրանում, վոր տսեն մեկը գիտակցաբար յենթարկվի մեծամասնության վորուման, ընդունի յեվ կատարի այն, ինչ վոր գրված ե կանոնադրության մեջ, կատարի ընդհանուր ժողովների վորումները յեվ միության բարձր որգանների ցուցմունքները յեվ կարգադրությունները յեվ անդամավճար մուծի:

Այդ դիսցիպլինան մտցրված ե միության մեջ, վորպեսզի նա կուռ և միացլալ լինի։ Յեթե ամեն մեկն աներ այնպես, ինչպես ինքն ե ու-

* Միության ծարդ համագումարի վարոշման համաձայն նաև նոր կանոնուն բաժանմուն ըները կամ հանրապետական վարչությունները, փոխանոտել 2 տոկոսը հավաքելու, կարող են կենակոսի թույլտվությամբ վարոշել անդամավճարների մնայուն չափությունը։

զում, կանոնադրությանը չենթարկվեր, միության դիսցիպլինան խախտեր՝ կտտացվեր մի խառնաշփութուն և հնարավոր չեր լինի վորեն աշխատանք կատարել. գրանից կոդտվելին միայն վարձողները: Կամ յեթե անդամավճար չմտցնելինք, այն ժամանակ միությունը հնարավորություն չեր ունենալ աշխատելու և իրեն վրա դրած պարտականությունները կատարելու: Ամեն մեկի համար պարզ է, վոր թե համազումար հավաքելու, թե թղթի, թե գործադուրկներին ոգնելու և այլ բաների համար միջոցներ են հարկավոր:

Միության ամեն մի անդամ պետք է հաւկանա, վոր առանց դիսցիպլինալի միությունը վոչինչ չի կարող անել և չի լել կարող գոյություն ունենալ:

8. ՄԻՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ, ԱՆԵԼԻՔՆԵՐԸ

Ամենից առաջ խոսենք գլուղական տնտեսություններում աշխատող բարբակների մասին:

Նրանք միության միջոցով աշխատում են իրենց աշխատավարձը բարձրացնել, մենք դիտենք, վոր սեփական տնտեսություն ունեցողը վարձելու ժամանակ աշխատում է վորքան կարելի չե եւան վարձելց քանի վոր դա նրան ձեռնտու:

յե—վորքան քիչ վճարի, ախքան շատ ոգուս
կմնա իրեն։ Նա աշխատում ե, վորքան կարելի
յե, բատրակին շատ բանեցնել, այսինքն աշխա-
տանքի որը յեւ կարացնել. այդ ել ե նրան ձեռն-
տու, պարզ ե։ Դրա համար ել, նա աշխատում
ե վոչ միայն եժան վարձել բատրակին, այլև որ
ու զիշեր և տոներին ել աշխատեցնել նրան.
վատ ե կերակրում, պահանջված հագուստը չի
տալիս, ապրելու կարգին տեղ չի տալիս և այն
և այն։ Կուլակները հո, ամեն կերպ աշխատում
են բամել բատրակին։

Թագավորի ժամանակ, յերբ որենքը կալվա-
ծատերի և կուլակի կողմն եր պահում և բատ-
րակներն ուղղակի ճորտեր ելին, կալվածատերն
ու կուլակն ինչ քեֆերն ուզում եր, ենպես ել
անում ելին, ով կարող եր ձեն ու ծպտուն հա-
նել։ Այժմ ալդպես չե. բատրակներն իրենց
պաշտպանն ունեն. — նրանց պաշտպանը Խորհըր-
դակին իշխանությունը և պրոֆմիությունն ե։
Սրանք թուլ չեն տալ, վոր բատրակներին ելի
ճորտացնեն։

Բատրակների շահերի և աշխատանքի պաշտ-
պանության համար Խորհըրդակին իշխանությունը
հասուլ որենքներ ե հրատարակել։ Այդ որենք-
ները մշակվել են Գյուղղանտառ միության և բատ-
րակների մասնակցությամբ։ Այդպես, «զյուղա-

կան տեսեսությունների մեջ տարվող ոժանդակ վարձու աշխատանիքի մասին հրատարակված ժամանակավոր կանոնները» նրա համար են, վոր պաշտպանեն գլուղական միջակ և թույլ տնտեսություններում աշխատող բատրակների շահերը: Կուլակային—արդյունաբերական տնտեսություններում աշխատող բատրակների շահերը պաշտպանվում են ընդհանուր որենքներով, այսինքն «Աւագանությունների» հիման վրա: Ինկատի ունենալով, վոր կուլակային տնտեսությունները վարձուաշխատանքից բավական զգալի ոգուտներ են ստանում՝ սրանց համար ևս նույն պայմաններն են սահմանված, ինչ վոր և արդյունաբերական տնտեսությունների համար (որինակ, ինչպես խորհրդային տնտեսությունների համար): Կա նաև մի հատուկ որենք, վորը պաշտպանում ե այն հովիվների և հոտաղների աշխատանքը, վորոնք աշխատում են գլուղական համալնքների համար, կամ միքանի տնտեսությունների համար:

Այդ որենքների մեջ խոսվում ե, թե ինչ պայմաններ պարտադիր կերպով պիտի ստեղծվեն վարձվողի համար. և վոչ մի վարձող իրավունք չունի վատ պայմաններով վարձել բատրակին, հովիվին, ամեն բան կա որենքում:

Վորպեսզի վարձողները վարձելու պայմանները ճշտությամբ կատարեն՝ միությունը նրանց

հետ աշխատանքալին պայմանագիր և կնքում,
վորի մեջ ամեն բան նախատեսնված ե լինում:
Յեթե պայմանագիրը կապվում ե միայն մեկ
բանվորի համար, նա անվանվում ե աշխատան-
խային պայմանագիր, իոկ չերք կապվում ե մի
վարձողի հետ շատ բանվորների համար՝ նա ան-
վանվում ե աշխատանխային կոլեկտիվ պայմա-
նագիր: Վարձողի հետ կոլեկտիվ պայմանագիր
կարող է կապել միայն պրոֆմիությունը: Առան-
ձին մի բանվորի համար պայմանագիր կարող ե
կապել և միությունը՝ այդ բանվորի մասնակցու-
թյամբ կամ ինքը՝ բանվորն առանց միության:

Բատրակի համար ի՞նչպես ե ձեռնտու պայ-
մանագիր կապել. — միության միջոցով, թե մե-
նակ:

Պայմանագիր կապելու ժամանակ անհրա-
ժեշտ ե գիտենալ այն որենքները, վորոնք պաշտ-
պանում են բանվորի շահերը. առանց որենքնե-
րը գիտենալու բանվորը կարող ե այնպիսի պայ-
մանագիր կապել, վոր իրեն ոգուտ չլինի:

Վարձողները, մանավանդ կուակներն, իհար-
կե, աշխատում են այնպիսի պայմանագիր կապել,
վոր համ «որենքով» լինի, համ ել իրենց համար
ձեռնտու, չերք մենակ բանվորի հետ գործ ու-
նեն նրանք, պարզ ե, վոր նրան հուզ տալը ա-
վելի հեշտ ե լինում: Այս բանը լավ պիտի հաս-

կանան վարձվողները և նախքան վարձվելը և
պայմանագիր կապելը՝ խորհրդակցեն միության
հետ կամ գյուղիազորի հետ:

Միության ամեն մի աշխատակից պարտա-
վոր և գյուղանտառային բանվորների աշխատանքի
պաշտպանության որենքները դիտենալ. պայմա-
նագիր կապելու ժամանակ միության ներկայա-
ցուցիչն որենքի հիման վրա կարող և ավելի լավ
պայմաններ մշակելու քան թե ինքը՝ բանվորը մե-
նակ:

Միության ամեն մի անդամն առանձին—ա-
ռանց միության և իր ընկերների ոգնության, չի
կարող իր աշխատավարձը բարձրացնել քանի
վոր վարձողներն արդպիսի դեպքերում շատ ան-
գամ աշխատում են այդ բանվորին արձակել և
նրա տեղը վերցնել մեկ ուրիշին, վորն ավելի
եժան կաշխատեր: Յերբ վոր միությունն և պա-
հանջուժ աշխատավարձն ավելացնել՝ վարձողի
համար այնքան ել հեշտ չի իր բանվորին արձա-
կել և նրա տեղը մի ուրիշին վարձել: Հենց
վոր արձակեն՝ միությունն արձակողին կա-
րող և բոյկոտի լենթարկել, և լեթե տեղի
բանվորները կազմակերպված են՝ վոչ վոք այլևս
չի գնալ արձակողի մոտ աշխատելու: Վորպեսզի
տերերին ստիպի բատրակների պահանջները կա-
տարել՝ միությունը կարող և գործադուլ հայտա-

ըարել ամբողջ գյուղում կամ ամբողջ շրջանում
և այլն:

Բացի աշխատավարձի չափի խնդրից, կանան
աշխատավարձը ժամանակին տալու խնդիր. մի-
ությունը դրա համար ել ե աշխատում:

Միությունն աշխատում ե նաև, վոր բան-
վորները պայմանավորված ժամանակից ավել չաշ-
խատեն, վոր նրանք ապահովագրվեն հիվանդու-
թյան կամ վնասվելու դեպքերի համար, վոր նրանց
հարմար շենքեր տան ապրելու համար և վոր-
պեզի վարձողները նրանց հետ լավ վերաբեր-
վեն: Ահա, թե ինչի է ձգտում միությունը:

Պայմանագիր կապելու ժամանակ միությու-
նը աշխատում ե նարավորին չափ լավ պայման-
ներ մշակել բանվորների համար, բայց նա բո-
լոր վարձողների վերաբերմամբ միատեսակ պա-
հանջներ չի դնում: Նա հաշվի է առնում ամեն
մի տնաեսության ուժը և վորքան հարուստ ե
լինում տնտեսությունը, ամուր և արդյունավետ,
այնքան ել նա ավելի լավ պայմաններ ե պա-
հանջում ստեղծել բանվորների համար:

Գործատերերի կողմից պայմանագրի խախ-
տելու ամեն մի դեպքի մասին միության ան-
դամները պարտավոր են տեղեկացնել միության
և միության ներկայացուցիչը պետք ե միջոցներ
ձեռք առնի, վոր պայմանագիրը ճշողությամբ կա-
տարվի:

Յենթադրենք, թե բատրակի և գործատիրոջ
 մեջ վեճ ե ծագում. յեթե գործատերը չհամա-
 ձայնի կատարել միության պահանջը՝ վեճը վեր-
 ջացնելու համար, ապա գործը վարձողի համաձայ-
 նությամբ տեղափոխվում ե հաւաքարար հանձնաժո-
 ղով, վորտեղ կա այդպիսին. հաշտարար հանձնաժո-
 ղովի նիստին մասնակցում են շրջգործկոմի կամ
 գյուղխորհրդի նախագահը, վարձողը և միության
 ներկայացուցիչը։ Այդ հանձնաժողովում միության
 ներկայացուցիչը պիտի պաշտպանի բատրակ-
 ների արդարացի պահանջները։ Յեթե վարձողը
 չուզենա գործը հաշտարար հանձնաժողովին
 հանձնել կամ հանձնաժողովում կողմերը համա-
 ձայնության չգան՝ միությունը կամ նրա ներկա-
 յացուցիչը գործը հանձնում են ժողովատարանին,
 վորտեղ նույնպես միության ներկայացուցիչը
 պաշտպանում ե բանվորների շահերը։

9. ՄԻՈՒԹՅՈՒՆՆ Ի՞ՆՉՊԵՍ Ե ՊԱՇՏՊԱՆՈՒՄ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ (ՍՈՎԼԻՇՋ) ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ՇԱՀԵՐԸ

Բայց կասեն՝ թե «դուք մինչ այժմ խոսում
 եք մասնավոր գործատերերի մասին, իսկ ինչ-
 պես պետք ե անել, յերբ գործը վերաբերում ե
 խորհրդալին տնտեսության։ չե վոր այնտեղ տեր
 չկա, այնտեղ գոյություն ունի կառավարիչ կամ

վարչություն, վորոնք իրենք ել վարձու աշխատողներ են: Միությունը պաշտպանում ե արդարեղի բանվորների շահերը և յեթե պաշտպանում ե, ապա ինչ ձեռվա:

Այս, միությունը խորհրդավին տնտեսության բանվորների հաշերն ել ե պաշտպանում, բայց խորհրդավին տնտեսության մեջ և գյուղացու կամ վորեե մասնավոր տնտեսության մեջ, բանվորի դրությունը միևնույնը չե: Խորհրդավին տնտեսությունը խոշոր գյուղատնտեսական ձեռնարկություն ե և պատկանում ե վոչ թե մասնավոր մարդու, այլ խորհրդավին բանվորական պետությանը, հետևապես, բանվորների հենց իրենց շահը պահանջում ե, վոր այդ տնտեսության դրությունը լավ լինի և վոր նա հետզհետե ուժեղանա, վորովհետե, վորքան այդ տնտեսության գործերը լավ գնան, վորքան նա շատ արդիունը տա՝ այնքան նա ավելի կամրանա, և այնքան ել բանվորների դրությունը կլավանա, այնքան ել նրանց աշխատավարձը կբարձրանա. այդ հարցով զբաղվում ե և միությունը և ինքը՝ Խորհրդավին պետությունը

Պետական տնտեսության կառավարիչը նույնը չի, ինչ վոր մասնավոր տնտեսության գործակատարը, նա ծառայում ե խորհրդավին պետությանը. բանվորական կառավարությունը նրան

վսասահացել ե իր տնտեսությունը: Յեկ խոր-
հրդալին տնտեսության վրա միությունն ավելի
հեշտ կարող ե ազդել, քան մասնավորի վրա: ալս-
տեղ նա կարող է հետաքրքրվել այն հարցով և
պարզել, թե ինչ ծախսեր սխալ են կատարվել
և թե ինչ պիտի անել, վոր տնտեսությունն ար-
դյունք տա: Իսկ արտադրական հանձնաժողով-
ների միջոցով բանվորներն իրենք կարող են ա-
ռաջարկ մտցնել, թե ինչպես պետք ե տնտեսու-
թյան պայմանները կանոնավորել և արտադրու-
թյան վերաբերյալ ամեն մի հարցի մասին բա-
ցատրություն պահանջել վարչությունից:

Ինում են և այնպիսի դեպքեր, յերբ բան-
վորների աշխատավարձը չեն բարձրացնում, իսկ
տնտեսությունից ստացած արդյունքը ծախսվում
է անոգուտ բաների վրա, որինակ, կառքերի, ձի-
երի և այլ շռավությունների վրա: Միության
անդամները և միության մարմինները պիտի հե-
տեվեն, վոր նման անկարգություններ տեղի չու-
նենան: Յերբ վոր տնտեսավարը չի կարողանում
գործը կարգին տանել, ավելորդ շռավություն-
ներ և անում, միությունն իրավունք ունի մի-
ջամտել և պահանջել վերացնելու նման յերևությ-
ները:

Բանկումները հոգ են տանում; վոչ միայն
նրա համար, վոր հավաքական պայմանագիրը

ճշտությամբ կատարվի (աշխատավարձի, աշխատանքի ժամերի, բնակարանի և այլ խնդիրներ) և վոր արտադրությունը լավ հիմքերի վրա դրվի, այլև բանկոմն աշխատում ե, վոր բանվորների բնակարանները լավ գրության մեջ պահպան, վոր բանվորները հանգստյան որեր ունենան, ապահովագրվեն, բժշկական ոգնություն ստանան, վոր աշխատանքը տնտեսության մեջ գրվի լավ հիմքերի վրա, վորպեսզի բանվորները բժշկական ոգնություն ստանան, վոր նրանք ակումբներ ունենան հանգստանալու և պարագանքների համար և այլն:

10. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՑԵՎ ԱՆՏՍՌԱՑԻՆ ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ԽՍՀՄ-Ի ՑԵՎ ՍՄԲՈՂԶ ԱՇԽԱՐՀԻ ԲԱՆՎՈՐ ԴԱՍԱԿԱՐԳԻ ՄԻ ՄՍՍՆ ԵՆ ԿՍՁՍՈՒՄ

Մենք արդեն գիտենք, վոր գյուղատնտեսական և անտառային բանվորներն իրենց միությունն ունեն: Բայց բավական չեմիայն իրմիության մասին տեղյակ լինել: Մեզնից ամեն մեկը պիտի գիտենա, վոր բոլոր բանվորներն ել, ինչպես՝ մետաղագործները, մանածագործները, լերկաթուղարինները, փոխադրողները (նաև ահանգստի բանվորները, բեռնողները), բոլորն ել կազմակերպված են և իրենց պրոֆմիություններն ունեն:

Դրսղանառ միությունը ԽՍՀՄ ի պրոֆ-

միությունների ընտանիքի մի անդամն և և կապված է գրանց հետ կենտրոնի միջոցով:

ԽՍՀՄ-ի բոլոր պրոֆմիությունների ընդհանուր համագումարներում լուրաքանչյուր տարի ընտրվում է Պրոֆմիությունների Համամիութենական կենտրոնական Խորհուրդը (ՀԱՄԿԸ), վորի մեջ մտնում և նաև մեր միության ներկայացուցիչը:

Կենտրոնական խորհուրդը ընտրվում է, վորպեսզի աշխատանքը տարվի համերաշխ կերպով և վորպեսզի մենք կարողանանք միացնալ ուժերով տանել մեր աշխատանքը:

ԽՍՀՄ-ի բանվորական դասակարգի, ինչպես և ամբողջ աշխարհի բանվորների նպատակն է՝ կոմունիստական կուսակցության ղեկավարությամբ ստեղծել այնպիսի կարգեր, վորտեղ արտադրության միջոցները (գործարանալին և գյուղատնտեսական մեքենաներ և այլն) պատկանելու յեն վոչ թե առանձին մարդկանց, այլ աշխատավորների համայնքին, վորտեղ, ուրեմն, չեն լինելու դասակարգեր և հասարակությունը բաժանված չի լինի բանվորների, գյուղացիների, բարակների, կուլակների, վորտեղ ընդհանրապես գոյություն չեն ունենալ վարձողներ և վարձվողներ, շահագործողներ և շահագործվողներ։ Այդ նոր սոցիալիստական կարգերում բոլորն ել մաս-

նակցելու յեն հասարակական տնտեսությանն իբրև
դիտակից և հավասար աշխատողներ։ Դրա համար
ԽՍՀՄ-ի բանվորները, գրանց թվում նաև գլու-
ղատնտեսական բանվորները պիտի աշխատեն
ամրացնել և ուժեղացնել պրոլետարիատի դիկ-
տատուրան, այսինքն բանվոր դասակարգի գեր-
իշխանությունը և պիտի ճնշեն նախկին կալվա-
ծատերերի, կապիտալիստների և կուլակների
հին կարգերը վերականգնելու փորձերը։ Նրանք
այդ աշխատանքը պիտի տանեն չքավոր գլու-
ղացու հետ միասին, միջակի հետ դաշն պահելով։
Այդ ձևով նրանք կկարողանան իրականացնել իրենց
նպատակները։

Կապիտալիստական յերկրների բանվորներն
ել ունեն իրենց պրոֆմիությունները։ Ճիշտ ե,
այդ յերկրներում բանվորների մի մասը գեռես
համաձայնողական քաղաքականություն տանող
կուսակցությունների ազդեցության տակ և գրտ-
նվում։ այս բանվորները՝ պատկանում են այն
պրոֆմիություններին՝ վարոնք Ամստերդամյան
դեղին պրոֆմիությունների մեջ են մանում։

Համաձայնողական կուսակցությունները և
պրոֆմիությունները նրանք են, վորոնք սիային
խոսքով են պաշտպանում բանվոր դասակարգի շա-
հերը, իսկ վիասորեն աշխատում են հաշավել,
«համաձայնել» բանվորների և գլուղացիների թըշ-

Նամիների հետ՝ իմասս հենց բանվորների և գլու-
ղացիների: Որինակ, վերցնենք մենշևկիներին և ե-
սերներին: 1917 թվին, այսպես կոչված Ժամա-
նակավոր կառավարության որերին, նրանք խոս-
քով համաձայնեցին հողը կալվածատերերից խլե-
լու, այնինչ փաստորեն նրանք դիմեցին, «վոր
բատրակներն ու գլուղացիները խլեն ալդ հողե-
րը (ասում ելին թե՝ փոխադարձ համաձայնու-
թյան չեկեք, «հաշտվեցեք», բայց հողը խլելու
փորձ չհամարձակվեք անել): Գերմանական և
ավստրիական սոցիալ-դեմոկրատներն ել դրանց
նման են. նրանք ել խոռովով բանվորների կողմն
են, մինչդեռ գործով ոգնում են կապիտալիստ
ներին՝ բանվորներին շահագործելու և լերը վոր
գործը հասնում ե բանվորներին իրական ոգնու-
թյուն հասցնելու խնդրին՝ նրանք որական տասն
անգամ կարող են դավաճանել բանվորներին և
նույնիսկ կանգ չեն առնում նրանց զնդակահա-
րելու առաջ (որինակ՝ գերմանական հեղափո-
խությունը, Վեննայի բանվորների վերջին ապրո-
տամբությունը 1927 թվին): Անգլիական պրոֆ-
միությունների ղեկավարները, վորոնք զլուխ են
կանգնած անգլիական ռբանվորական կուսակ-
ցության՝ նույնպիսի համաձայնողականներ են:
Խոսքով դուրս են դալիս բանվորների անունից,
բայց դրանք ելին, վոր 1926 թվին վիժեցրին

հանքագործների և ընդհանուր բանվորական գործադուլները, ոգնեցին անգլիական կապիտալիստների կառավարության՝ չինական հեղափոխությունը խեղզելու (1925—27 թ.), նրանք ելին, վոր փոխանակ բանվորների համար կռվելու՝ 1927 թվին համաձայնեցին կառավարության հետ՝ պրոֆմիությունների մասին նոր որենք հրտարակելու, վորով փաստորեն բանվորների իրավունքները սահմանափակվեցին նրանք են, վոր ոգնում են կառավարությանը չինական և հնդկական բանվորներին խեղզելու։ Համաձայնողական բոլոր կուսակցությունները և դրանց ղեկավարները միշտ արդարանում են նրանով, վոր իբր թե նրանք «համաձայնում են» միայն ժամանակավորապես, առայժմ։ Բայց մենք շատ լավ գիտենք Ռուսաստանի հեղափոխության և համաշխարհական բանվորական շարժման փորձից, վոր այդ ասածները խաբեքայություններ են, վոր այդպես խոսող կուսակցությունները և ղեկավարները վոչ թե միայն ժամանակավորապես, առայժմ են համաձայնում, այլ միանգամայն վորու կերպով յեվ մօսապես աշխատակցում են կապիտալիստական դասակարգին սոցիալիզմի դեմ տարվող կռվում։ Ահա, թե ինչու բանվորները նրանց համաձայնողականներ են անվանում։

Նրանք մեկ ուրիշ անուն ել ունեն, այն եւ՝
«ուժորմիստներ»։ այդ անունը նրանց տալիս
են նրա համար, վոր այդ կեղծ սոցիալիստները,
փոխանակ դասակարգավին հեղափոխական կոիվ
մղելու, բանվորներին աշխատում են տանել վո-
զորմությունների և բարելավումների ճանապար-
հով, և աշխատում են բանվորներին ներշնչել,
վոր այդպիսի վողորմություններով և աստիճա-
նական խաղաղ բարեփոխություններով («ուժ-
որմներով») կարելի է «խաղաղ ճանապարհով»
բանվոր դասակարգի ազատագրման համար։ Բայց
մենք, ինչպես արդեն գիտենք՝ դա բանվոր դա-
սակարգի ազատագրություն չե, այլ բացարձակ
խարեբայություն, վորը կապիտալիստական կար-
գերի ամրացմանն ե միայն նպաստում։ Այդ պատ-
ճառով ել «համաձայնողականներն» ու «ուժոր-
միստները» բանվոր դասակարգի համար ավելի
պակաս վտանգավոր չեն, քան իրենք՝ կապիտա-
լիստները, քանի վոր նրանք թուլացնում են
բանվորների զգաստությունը և խանգարում են
նրանց դասակարգավին կոիվ տանելու շահագոր-
ծողների դեմ։ Կապիտալիստներին ել այդ ե հար-
կավոր։ Այս բոլորից հետո պետք ե ասել, վոր
այդ մարդիկ՝ «համաձայնողականները» և «ուժ-
որմիստները» պարզեիպարզ կապիտալիստնե-
րի ոգնական։ ծառայողներն են։

Պետք ե ասել, վոր կապիտալիստական
լերկներում հետզհետե ավելի և ավելի մեծ
քանակությամբ բանվորներ անցնում են կռվի
այն ձեերին, վոր տանում ելին բայլշեիկները և
հեղափոխական պրոֆմիությունները Հոկտեմբեր-
յան հեղափոխությունից առաջ։ Նրանց համար
պարզվում ե հետզհետե, վոր բուրժուազիալի հետ
պետք ե կռվել վոչ միայն խոսքով, այլ ավելի
խիստ միջոցներով, հարկավոր դեպքում՝ զինված
ազտամբությամբ։ Աշխատանքի պայմանների
բարելավման կռվի հետ միասին այդ պրոֆմիու-
թյուններն աշխարհիս բոլոր կոմունիստական
կուսակցությունների հետ ձեռք ձեռքի կռվում
են հողի, արտագրության միջոցների, գործա-
րանների մասնավոր սեփականատիրությունը վե-
րացնելու համար, կռվում են բուրժուաների և
կալվածատերերի իշխանությունը կործանելու և
խորհրդային իշխանություն ու կոմունիստական
կարգեր հաստատելու համար։ Այդ պրոֆմիու-
թյունները կոչվում են հեղափոխակտն, կարմիր
պրոֆմիություններ։ Նրանք բոլորը մտնում են
հեղափոխական պրոֆմիությունների միջազգային
կազմակերպության, այն ե՝ Պրոֆինտերնի մեջ։
Պրոֆինտերնը Մոսկվայումն ե գտնվում։ Պրոֆ-
ինտերնը կազմված ե աշխարհի բոլոր հեղափո-
խական պրոֆմիությունների ներկայացուցիչնե-


բից։ Վորքան վոր մեծանում ե բոլոր լերկրներում կապիտալիստների և կալվածատերերի դեմ կռվող բանվորների թիվը, այն չափով ել մեծանում ե պրոֆինտերնի ուժն ու ազգեցությունը։


ԽՍՀՄ-ի Գլուղանտառ միությունը ևս ՀԱՄԿԽ-ի միջոցով մտնում է Պրոֆինտերնի մեջ, իբրև ոխանդամ ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի առաջավոր մասին։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

եջ

1. Միությունը—ուժ	3
2. Ինչ և բանվորական միությունը	7
3. Ինչու բանվորական միությունները պրոֆեսիոնալ միություններ են կոչվում	12
4. Ինչպես ելին միությունները կազմակերպվում առաջ և ինչպես ալժմ	15
5. Ինչպես և կառուցված Գլուղանտառ միությունը	22
6. Ով կարող ե միության անդամ լինել և ով չի կարող	31
7. Ինչ ե գիսցիպլինան և ինչի համար ե նա	35
8. Միության նպատակները, անելիքները . . .	42
9. Միությունն ինչպես և պաշտպանում խորհրդակին տնտեսությունների բանվորների շահերը	48
10. Գլուղանտառնեսական և անտառալին բանվորները ԽՍՀՄ-ի և ամբողջ աշխարհի բանվոր դասակարգի մի մասն են կազմում .	51





ԳԱԱ Հիմնարար Գիտ. գրադ.



FL0039057

(124)



9160 15 4.

A 1
4472

Н. П. Непомнящий.
Как строится и чего добивается
профсоюз сельхозлесрабочих
СССР.